ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄ
(ծագման և զարգացման պատմության շուրջ)

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ռ. Կ.

«Սոցիալիստական ռեալիզմ» եզրույթն առաջին անգամ հայտնվել է 1923 թ. մայիսին «Լիտերատուրնայա գազետա» թերթի համարներից մեկում[1]: Թերթը զետեղել է «Ապահովենք գրական խմբակների ստեղծագործական գործունեության բոլոր պայմանները» տեղեկատվությունը, որտեղ նշվել է, որ Մոսկվայի գրական խմբակների կազմակերպության նիստերին գրողների միության կազմկոմիտեի նախագահ Իվան Գրոնսկին[2] իր ելույթում մասնավորապես ասել է. «Մեթոդի մասին հարցն անհրաժեշտ է վերացականորեն չներկայացնել, այդ գործին չմոտենալ այնպես, որ գրողը նախ պարտադրաբար անցնի դիալեկտիկական մատերիալիզմի դասընթացները, հետո նոր ստեղծագործի: Գրողներին առաջադրվող հիմնական պահանջն է՝ գրել ճշմարտության մասին, ճշմարտացիորեն արտացոլել մեր իրականությունը, որ ինքնին դիալեկտիկական է: Ուստի խորհրդային գրականության հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է»[3]:

Նոր մեթոդի հաստատումը անհրաժեշտ էր խորհրդային պետության ղեկավարությանը, ամենից առաջ՝ իր քաղաքականությունն առավել հիմնավորված, նպատակաուղղված, փաստարկված քարոզելու համար, ինչպես նաև 1917 թ. հոկտեմբերյան իրադարձություններից հետո կազմավորված տարբեր գրական միությունների, մասնավորապես 1925 թ. ստեղծված Պրոլետարական գրողների ռուսական ասոցիացիայի (ՌԱՊՊ)[4] կազմում հանդես եկող գրողների գործունեությունը համակարգելու անհրաժեշտությամբ:

---

[1] *"Литературная газета" – ռուսական պարբերական հրատարակություն: Թերթի առաջին համարը, որը հիմնադրվել է գրողների խմբի կողմից՝ Ա. Պուշկինի մասնակցությամբ, լույս է տեսել 1830 թ. հունվարի 1-ին: Ժամանակակից թերթը սկզբնավորվում է 1929 թ. ապրիլի սկզբից՝ Մաքսիմ Գորկու նախաձեռնությամբ: Թերթը դարձավ Խորհրդային գրողների միության կազմկոմիտեի, իսկ խորհրդային գրողների առաջին համագումարից հետո՝ ԽՍՀՄ գրողների միության վարչության հրատարակությունը: 1990 թվականից "Литературная газета"-ն անկախ հրատարակություն է՝ հիմնադրված թերթի կոլեկտիվի կողմից:*

[2] **Գրոնսկի Ի. Մ.** *(1884-1985) – խորհրդային հասարակական գործիչ, լրագրող, գրականագետ: 1930-ական թվականներին Ի. Ստալինի վստահված անձն էր, Խորհրդրդային գրողների միության կազմկոմիտեի նախագահը: 1939 թ. ամռանը ձերբակալվել է: 16 տարի անցկացրել է ճամբարներում և աքսորում: Ստալինի մահից հետո արդարացվել է: Ձերբակալությունից հետո աշխատել է Համաշխարհային գրականության ինստիտուտում:*

[3] **Борев Ю.** *Социалистический реализм: взгляд современника и современный взгляд, М., 2008, с. 76.*

[4] *ՌԱՊՊ (Российская ассоциация пролетарских писателей) – զանգվածային գրական կազմակերպություն: Գործունեության տարիները՝ 1925-1932: Առաջատար պրոկոմունիստական կազմակերպություն: ՌԱՊՊ-ը անհանդուրժողական*

Կրեմլում շատ լավ գիտակցում էին, որ ռոմանտիզմի՝ որպես աշխարհի իդեալիստական ընկալման լիովին ժխտումը, ինչպես նաև ռապպականների կողմից հրապարակախոսության և երգիծանքի ժանրի սահմանափակումը անհեռանկարային ձգտումներ են:

«Լիտերատուրնայա գազետա» թերթի վերոհիշյալ հրապարակումից հետո «սոցիալիստական ռեալիզմ» եզրույթը լայնորեն քարոզում էին նրա հեղինակները՝ Իվան Գրոնսկին և ՀԿԿ(բ)ԿԿ խմբագրակազմի գեղարվեստական բաժանմունքի վարիչ Վալերի Կիրպոտինը[5]:

Մինչև 1950-ական թթ. երկրորդ կեսերը, երբ ձևակերպվել էր «սոցռեալիզմ» հասկացությունը, գլխավոր իրադարձություն էր համարվում կուսակցության և կառավարության ղեկավարների հանդիպումը գրողների հետ Մաքսիմ Գորկու բնակարանում 1932 թ. հոկտեմբերին: Այդ հանդիպմանը մասնակցում էր Ի. Ստալինը: Անկասկած, «անհատի պաշտամունքի» ժամանակներում ցանկացած կարևոր կանխադրույթ մշակվել է կամ Ստալինի հավանությամբ, կամ ինքն է մշակել: Ականատեսների (Իվան Գրոնսկի, Վալերի Կիրպոտին) վկայությամբ, Ստալինը խորհրդային գրականության գեղարվեստական մեթոդն անվանել է սոցիալիստական ռեալիզմ[6]:

ԽՄԿԿ XX համագումարից հետո (1956)՝ հաջորդ բոլոր տասնամյակներում, սոցռեալիզմի հիմնադիր է համարվել Մաքսիմ Գորկին, իսկ նշանակալից իրադարձությունը խորհրդային գրողների առաջին համամիութենական համագումարն էր (1934 թ. օգոստոս), որը սոցռեալիզմը սահմանում էր որպես Խորհրդային Միության արվեստում գործածվող հիմնական գեղարվեստական մեթոդ: Մաքսիմ Գորկին դեռևս մինչև գրողների առաջին համագումարը հարվածային-կոլտնտեսականների համամիութենական առաջին համագումարում իր ողջույնի խոսքում գրել է. «Որպեսզի անցյալի թունավոր, մղձավանջային նողկանքը լիովին լուսաբանվի և հասկանալի լինի, անհրաժեշտ է, որ մարդ իր մեջ զարգացնի ունակություն՝ նրա վրա նայելու ներկայի նվաճումների և ապագայի մեծ նպատակների բարձրությունից: Այդ բարձրագույն տեսակետը պետք է և պիտի արթնացնի այն հպարտ, ուրախ պաթոսը, որը մեր գրականությանը նոր երանգ կհաղորդի, կօգնի նրան ստեղծել նոր ձևեր, կստեղծի մեզ համար անհրաժեշտ նոր ուղղություն՝ սոցիալիստական ռեալիզմ, որը, ինքնին

պայքար էր մղում այլ գրողների կազմակերպությունների, գրական միավորումների դեմ:

[5] **Կիրպոտին Վ. Յ.** *(1898-1997) գրականագետ, քննադատ: Մաքսիմ Գորկու քարտուղարն էր: Նա է առաջարկել Գրողների միություն ստեղծելու գաղափարը: 1932-1936 թթ. ՀԿԿ(բ)ԿԿ գեղարվեստական գրականության բաժանմունքի վարիչն էր և միաժամանակ ԽՍՀՄ գրողների միության կազմկոմիտեի քարտուղարը: Պրոֆեսոր էր, Դ. Պիսարևի, Մ. Սալտիկով-Շչեդրինի, Մ. Դոստոևսկու, Մ. Շոլոխովի և Ն. Լեոնովի մասին գրքերի հեղինակը: Ստալինի հանձնարարությամբ գրել է «Պուշկինի ժառանգությունը և կոմունիզմը» գիրքը (1937 թ.):*

[6] *Տե՛ս* **Борев Ю.,** *նշվ. աշխ., էջ 77:*

հասկանալի է, կարող է ստեղծվել միայն սոցիալիստական կենսափորձի փաստերի հիման վրա»[7]:

Գրողների համագումարում «սոցռեալիզմ» եզրույթը ներառվեց միության կանոնադրության մեջ, և փաստորեն կայացավ «սոցռեալիզմ» հասկացության առաջին պաշտոնական սահմանումը, ըստ որի, ընդգծվում է հետևյալ պահանջը՝ իրականության ճշմարտացի, կոնկրետ-պատմական արտացոլումը՝ նրա հեղափոխական զարգացման մեջ: Հաստատվել է նաև ձևերի, ոճերի և ժանրերի ընտրության ազատությունը, որն այն ժամանակ հույժ հրատապ էր գրողների տարբեր խմբավորումների միջև գոյություն ունեցող բանավեճերի ոլորտում[8]:

Հանրահայտ է սոցռեալիզմի մասին Մ. Գորկու կարծիքը, որն իր տեղն է գտել խորհրդային գրողների առաջին համագումարում կարդացած նրա զեկույցում (1934, օգոստոսի 17): Արտահայտելով քննադատական ռեալիզմի մասին իր խոհերը՝ գրողը հանգում է այն եզրակացության, որ այդ ռեալիզմն ուղղված է «միայն անցյալի վերապրուկների լուսաբանմանը, նրանց դեմ պայքարելուն և արմատախիլ անելուն»[9]: Գորկին նկատում էր, որ այդ ձևը չի կարող ծառայել սոցիալիստական անհատականության դաստիարակությանը, քանի որ այն քննադատում է ամեն ինչ, սակայն ոչինչ չի սահմանում, իսկ վատագույն դեպքում վերադառնում է այն բանի հաստատմանը, ինչը նրանով չէր ժխտվում: Գորկին այնուհետև հավաստագրում է այն միտքը, որ սոցիալիստական անհատականությունը կարող է զարգանալ միայն կոլեկտիվ աշխատանքի պայմաններում: Այդ դրույթից հետո գրողը ներկայացնում է սոցիալիստական ռեալիզմի մասին իր սահմանումը, որը, անկասկած, հնչում է չափազանց լավատեսական տոնայնությամբ:

«Սոցիալիստական ռեալիզմը հաստատում է կեցությունը՝ որպես գործունեություն, որպես ստեղծագործություն, որի նպատակը մարդու արժեքային անհատական ընդունակությունների անընդհատ զարգացումն է՝ հանուն բնության ուժերի դեմ նրա հաղթանակի, նրա առողջության և երկարակեցության, հանուն երկրի վրա ապրելու մեծ երջանկության, երկիր, որ իր պահանջների շարունակական աճին համապատասխան՝ ցանկանում է դառնալ մարդկության հիասքանչ բնօրրան՝ բոլորին միավորելով մեկ ընտանիքի մեջ»[10]:

Ի՞նչ եղան «սոցռեալիզմ» եզրույթի հեղինակները: Իվան Գրոնսկին, չնայած իր նվիրվածությանը Ստալինին, 1938 թ. ձերբակալ-վեց, 16 տարի նստեց բանտերում և ճամբարներում: Վալերի Կիրպոտինը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մեղադրվեց «խուճապարարության» համար և կյանքի վերջին տարիներին զբաղվում էր մեծ մասամբ գիտական ու դասախոսական

---

[7] **Горький М.** *Собрание сочинений, М., 1953, с. 12-13.*

[8] *Տե՛ս Материалы Первого всесоюзного съезда советских писателей, М., 1934.*

[9] **Горький М.,** *նշվ. աշխ., էջ 229:*

[10] *Նույն տեղում, էջ 330:*

գործունեությամբ: Ռուս գրականության նշանավոր դասականի՝ Մաքսիմ Գորկու և նրա որդու մահերը մնացին անցյալ դարի չբացահայտված գաղտնիքների շարքում:

Ի. Գրոնսկին, Վ. Կիրպոտինը և նրանք, ովքեր հետագայում վերամշակել են սոցռեալիզմի տեսությունը՝ որպես գաղափարախո- սական հիմնավորում, դիտարկել են մարքսիզմի դրույթները: Կ. Մարքսը գրել է. «Հմայքը, որ մեր վրա թողնում է նրանց արվեստը (նկատի ունի բուրժուական արվեստը – Մ. Ռ.) չի հակադրվում այն թերզարգացած հասարակական աստիճանին, որի վրա այն աճել է: Ընդհակառակը, այն համարվում է դրա արդյունքը և անքակտելիորեն կապված է դրան՝ այն բանով, որ ոչ հասուն հասարակական պայմանները, որոնց ընթացքում այն առաջացել է և միայն ու միայն կարող էր առաջանալ, երբեք չեն կարող կրկնվել նորից»[11]:

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, հետազոտելով մշակույթի զարգացումը, անդրադարձել են նաև գեղարվեստական ստեղծագործության հարցերին: Նրանց համար կարևոր էր, ըստ պատմության մատերիալիստական ըմբռնման, սահմանել գեղարվեստական ստեղծագործության տեղն ու դերը այն աշխարհում, որում իրենք ապրել են:

Արվեստի մարքսիստական ըմբռնման մեջ գլխավորը ճանաչողության և իրականության արտացոլման ակտիվության ու այդ իրականության փոփոխական գործունեության միասնությունն է, որ համարվում է արվեստի յուրահատուկ հասկացություն՝ որպես հասարակական գիտակցության ձև:

Մարքսը և Էնգելսը նկատում էին, որ ռեալիստական արվեստը լիակատար չափով ընդունակ է պատասխանելու հասարակության պահանջներին, որոնք գոյակցում են ճշմարտացի և գեղարվեստորեն համակողմանի ճանաչողությամբ զարգացող կյանքում: Մարքսի և Էնգելսի համար ռեալիզմը արվեստի հիմքն էր, որ լիակատար չափով պատասխանում էր մարդկության պահանջներին, որ դուրս էր եկել պայքարի իր ազատության համար:

Մարքսիզմի մյուս դասականը՝ Վ. Լենինը, մեր կարծիքով, արդարացիորեն նկատում էր, որ անհատը ժամանակից և տարածությունից դուրս չի կարող գոյություն ունենալ, նմանապես ժամանակից և տարածությունից դուրս չի կարող գոյություն ունենալ նաև արվեստագետ անհատը: Այնուհետև նա նշում էր, որը գրողը պատմության ազատ տարածություններում անհետացած մենակյաց չէ, այլ իր դարաշրջանի զավակն է, և իր ժամանակի հասարակական պայքարում չի կարող որոշակի դիրք չգրավել: Ելնելով վերը նշվածից՝ Լենինը եզրակացնում է, որ գրականությունը պիտի կուսակցական դառնա՝ ի հակակշիռ բուրժուական բարքերի, բուրժուական ձեռնարկատիրական «առևտրական» մամուլի, բուրժուական գրական պաշտոնամոլության և անհատապաշտության, «ազնվականական անիշխանության»: Սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջադրի կուսակցական գրականության սկզբունքը, զարգացնի այն և կիրառի կյանքում հնարավորինս լրիվ և ամբողջական ձևով:

---

[11] **Маркс К., Энгельс Ф.** *Сочинения, т. 12, М., 1980, с. 737-738.*

Այնուհետև, հենվելով վերոհիշյալ դրույթների վրա, «սոցիալիստական ռեալիզմի» մեթոդի տեսաբանները հանգեցին այն եզրակացության, որ հատկապես այդ մեթոդն է համարձակորեն, համակողմանիորեն և խորապես ճանաչելի դարձնում աշխարհը: Դրա համար որևէ անհնարին բան չկա, չկա ոչինչ, որին կվախենա դիպչել փնտրող միտքը, որովհետև կյանքի օրենքները սոցիալիստական հասարակարգի աճի և հաղթանակի օրենքներն են:

Ահա այսպես՝ անառարկելիորեն, առանց կասկածների: Ե՛վ արվեստում, և՛ մշակույթում նույն սկզբունքն է. նա, ո՛վ մեզ հետ չէ, մեր դեմ է, որը և թույլ տվեց մարքսիստներին հաղթած երկրներում իշխանության գալուց հետո ստեղծագործող մտավորականության նկատմամբ իրականացնել ճնշումներ, հալածանքներ, նրանց պիտակներ կպցնել, սահմանափակել ազատասիրության և հումանիզմի դրսևորումները: ԽՍՀՄ-ի զարգացման տարբեր փուլերում «սոցռեալիզմի» մեթոդի ըմբռնումը ենթարկվեց փոփոխությունների, հաճախ՝ արմատական ձևով: Դա շատ դեպքերում որոշվում էր քաղաքական իրավիճակով, իշխող էլիտայի՝ ընտրախավի հետաքրքրություններով:

Ստալինի մահից և ԽՄԿԿ XX համագումարից հետո լույս տեսած “Большая Советская Энциклопедия” (БСЭ)-ի երկրորդ հրատարակության 40-րդ հատորում սոցռեալիզմը դիտարկվում է որպես գեղարվեստական մեթոդ, որի հիմնական սկզբունքը իրականության ճշմարտացի, կոնկրետ՝ պատմական արտացոլումն է՝ իր հեղափոխական զարգացման մեջ, իսկ կարևորագույն խնդիրը՝ զանգվածների կոմունիստական դաստիարակությունը:

Սոցիալիստական հարաբերությունների կայացման գործընթացում սոցռեալիզմը, նոր պայմաններում շարունակելով անցյալի ռեալիստական արվեստի ավանդույթները, դարձավ հիմնական ստեղծագործական մեթոդ ԽՍՀՄ-ում, ինչպես նաև ժողովրդադեմոկրատական այլ երկրներում[12]: Դասակարգային պայքարի և դասակարգերի հակադրության վերաբերյալ հաջորդող բնութագրություններում արտահայտությունները և ընդհանրացումները նշանակալիորեն սակավանում են, իսկ բուն սահմանման մեջ խոսվում է անցյալի ռեալիստական արվեստի ավանդույթների մասին:

Սկսվեց «ձնհալի» շրջանը: ԲՍԷ -ի երրորդ հրատարակության մեջ, որը լույս է տեսել 1976 թ., սոցիալիստական ռեալիզմի սահմանումը, ըստ խորհրդային չափանիշների՝ առավել պահպանողական է: Սոցռեալիզմը դիտվում է որպես գրականության և արվեստի գեղարվեստական մեթոդ, որը աշխարհի և մարդու սոցիալիստական ձևով գիտակցված տեսակետի գեղագիտական արտահայտությունն է՝ պայմանավորված այն դարաշրջանով, որը պայքարում է հանուն սոցիալիստական հասարակարգ ստեղծելու և այն կառուցելու:

Սոցիալիզմի գաղափարների լույսի ներքո կյանքի արտացոլումը պայմանավորում է արվեստի թե՛ բովանդակությունը, թե՛ գեղարվեստական-կառուցվածքային հիմնական սկզբունքները: Նրա ծագումը և

[12] Большая Советская Энциклопедия, т. 40, М.,1957, с. 180.

զարգացումը կապված են տարբեր երկրներում սոցիալիստական գաղափարների տարածման, հեղափոխական աշխատավորական շարժման զարգացման հետ[13]:

Ներկայացված սահմանումները ձևավորվել են կուսակցական հիմնարար փաստաթղթերի, պետության առաջին դեմքերի զեկուցումների հիման վրա, որոնք վերամշակվել են ԽՍՀՄ գաղափարախոսական և կառավարական մարմինների կողմից և արտահայտում էին տվյալ ժամանակաշրջանի քաղաքականության հետաքրքրությունները: Երկու սահմանումների միջև համեմատությունը և ամենաթռուցիկ հայացքն անգամ ակնհայտ է դարձնում անցյալ դարի 50-60-ական և 70-ական թթ. երկրորդ կեսերի ժամանակաշրջանում ԽՍՀՄ կառավարող էլիտայի հայացքների տարբերությունը, երբ մշակույթի ոլորտում հարաբերական ազատությանը փոխարինելու եկավ նշանակալիորեն առավել կոշտ գրաքննության և մարքսիզմի դոգմատիկ դրույթների իրականացման փորձերի ժամանակաշրջանը:

70-ական թթ. երկրորդ կեսին և 80-ական թթ. սկզբին Միությունում ծերացած խորհրդային քաղաքական ղեկավարությունը անմիջական գաղափարախոսական վերամշակումներով չէր զբաղվում: ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական բաժինների մեծաթիվ աշխատակազմը սահմանափակվում էր գաղափարախոսական կարևորագույն փաստաթղթերի մշակումով: Այդ աշխատանքն իրականացնում էին բավական պատրաստված, խորագիտակ անձինք, որպես կանոն, 60-ականի սերնդից, որոնք մտածում էին մեկ բան, գրում՝ մեկ ուրիշը՝ հոգուտ «կրեմլյան ծերակույտի» դոգմատիկ կանխադրույթների: Դրա հետևանքով ի հայտ էին եկել մարքս-լենինյան, երբեմն նաև ստալինյան հայտնի սահմանումների նորանոր, խմբագրված մեկնաբանություններ: Այսպես, սոցռեալիզմը համարվեց «գրականության և արվեստի գեղարվեստական մեթոդ՝ աշխարհի և մարդու՝ սոցիալիստական ձևով գիտակցված տեսակետի գեղագիտական արտահայտություն՝ պայմանավորված այն դարաշրջանով, որը պայքարում է հանուն սոցիալիստական հասարակարգ ստեղծելու և այն կառուցելու»[14]:

Սոցռեալիզմի արվեստի բովանդակությունը և հիմնական սկզբունքները դիտարկվել են կյանքի արտացոլման՝ սոցիալիզմի գաղափարների ներքո, որոնք տարածվեցին տարբեր երկրներում սոցիալիստական գաղափարների տարածման հետ:

Սոցռեալիզմի ներկայացված սահմանումը հրապարակվել է 80-ական թվականների երկրորդ կեսին, երբ խորհրդային պետության փլուզումը աստիճանաբար, բայց արագ թափ էր հավաքում:

Հեղաշրջման ձախողումից, դրա կազմակերպիչների ձերբակալություններից, կոմունիստական կուսակցության արգելանքից հետո այն ամենը, ինչ զուգորդվում էր խորհրդային վարչակարգի հետ, հոչակվում էր հանցավոր, հակամարդկային և հակագիտական:

---

[13] *Большая Советская Энциклопедия (III изд.), т. 24, М.,1976, с. 235.*

[14] *Литературный энциклопедический словарь, М., 1987, с. 414.*

Զարմանալի էր այն, որ ստեղծագործական միությունների, մշակույթի գործիչների ուժերով խստագույն քննադատության արժանացան մի շարք գործիչներ, նրանց արվեստը և գործունեությունը, որոնք իշխանության կողմից ընդունված են եղել, և որոնց համար վարչակազմը ստեղծել էր բարենպաստ պայմաններ: Կարելի է հիշել հրապարակային ելույթները. հայտնի է կինեմատոգրաֆիստների միության հինգերորդ համագումարը, որտեղ քննադատվեցին խորհրդային կինոարվեստի դասականները: Մի խոսքով, ըստ բովանդակության՝ կացությունը հիշեցնում է բոլշևիկների՝ իշխանության գալու ժամանակաշրջանը: Այնուամենայնիվ, կային էական տարբերություններ: Քաղաքական բազմակարծության հաստատումը չհանգեցրեց Ռուսաստանի նոր առաջնորդների՝ գրական մեթոդների փնտրտուքի անհրաժեշտության արվեստի և գրականության բնագավառում՝ մշակույթի կենտրոնացված կառավարումը հաստատելու նպատակով:

Հայաստանում զանգվածային պատերազմ հայտարարվեց հուշարձաններին: Ընդ որում ոչնչացվում էին ոչ միայն բոլշևիկյան առաջնորդներինը, այլև ոտնձգություն էր կատարվում ռուս դասականների հուշարձանների նկատմամբ: Երբեք հաշվի չէր առնվում ստեղծագործության գեղարվեստական արժեքը: Իհարկե, չէր կարելի թե այն ժամանակ և թե հիմա համակերպվել այն փաստի հետ, որ անկախ պետության մայրաքաղաքի կենտրոնատեղում վեր խոյանար Լենինի արձանը, բայց շատ ափսոս, որ վանդալիզմի ենթարկվեց արձանին հարող կիրառական արվեստի գլուխգործոց դարձած տրիբունան: Անկասկած գեղարվեստական արժեք էին ներկայացնում Արտաշես Հովսեփյանի՝ Մարքսի կիսանդրին Պոլիտեխնիկական (այժմ՝ Ճարտարագիտական) ինստիտուտի կենտրոնական մասնաշենքի առջև, Սուրեն Ստեփանյանի Ղուկաս Ղուկասյանի արձանները: Ավելի շուտ մետաղի թալանով էր պայմանավորված Արա Հարությունյանի՝ բանվորի արձանի անհետացումը կամ մինչ այժմ մասնատված՝ Գագարինի արձանը Երևան-Սևան մայրուղում: Ինչքան ճիշտ կլիներ այս գործերի մի մասը հավաքել մի տեղ (ինչպես արվել է Լիտվայում), որպես ժամանակին բնորոշ երևույթներ, իսկ որոշները պահպանել իրենց սկզբնական տեսքով: Սակայն մեկ անգամ ևս փաստենք՝ մեծ փոփոխությունների ժամանակը առաջ է քաշում նաև անհանդուրժող ավերիչներ, որոնք տարիների ընթացքում կուտակված անլիարժեքության բարդույթները դրսևորում են՝ պայքարելով անգամ արձանների դեմ, անտեսելով գեղարվեստական ազգային արժեք հասկացողությունը:

1990-ական թվականների սկզբից անցել է ավելի քան քսան տարի: Այսօր, երբ արդեն անցյալում են մնացել ոչ միայն խորհրդային իրականությունը, այլև հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման գործընթացում զգլխիչ տրամադրությունները, ակնհայտ է դառնում, որ բազմազգ պետության գրականությունն ու արվեստը միասնական գեղարվեստական մեթոդի ենթարկելու պետական ծրագիրը ձախողվել է: Չկայացած համարվեց նաև սոցիալիզմի դարաշրջանի բարձրորակ

ստեղծագործությունները իրավիճակային արվեստին դասելու ցանկությունը:

«Սոցռեալիզմի մեթոդով կատարված ստեղծագործություն» հասկացությունն իսկ հարաբերական բնույթ ունի: Չէ՞ որ, մասնավորապես, եթե գեղարվեստական կտավի վրա պատկերված են արևոտ օր ու նաև ժպտացող երեխաներ՝ դրան ավելացրած նաև պիոներական ալ փողկապներ, ապա դա սոցռեալիզմ է, իսկ եթե նկարում մառախլապատ օր է, մռայլ դեմքեր են, դա ոչ պաշտոնական արվեստ է, խորհրդային հետնախորշային արվեստ ու նմանատիպ երևույթներ: Եզրակացությունը մեկն է: Ինչպես բոլոր ժամանակներում են եղել, այժմ էլ կան բացառապես գեղարվեստական արժեք ներկայացնող ստեղծագործություններ՝ անկախ կատարման ձևից և մեթոդից: 2011 թ. վերջին և 2012 թ. սկզբին Պալացցո դելլե էսպոզիցիոնում տեղի է ունեցել խորհրդային արվեստի մասշտաբային հեռահայաց ցուցադրություն: «Յուցահանդեսը ներկայացնում է սոցռեալիզմի յուղանկարատիպ և ճարտասանական ոճերի զարգացումը,- բացատրում էր ցուցահանդեսային պալատի տնօրենը՝ Մարիո դե Սիմոնը: - Նրանում արտացոլվել են անհատական արժեքների աստիճանական գիտակցումն ու կոմունիզմի ապագա ճգնաժամը»[15]: Հատկապես անհատական արժեքների ըմբռնումը և կոմունիզմի ճգնաժամի գիտակցումը բնորոշ էին խորհրդային շրջանի գրականության և արվեստի լավագույն ստեղծագործություններին՝ անկախ նրանից, թե գեղարվեստական որ մեթոդով էին դրանք կատարվել:

«Սոցռեալիզմ» գեղարվեստական մեթոդի համալիր սահմանումը, մեր կարծիքով, պահանջում է հետագա ուսումնասիրություն և այն վերաիմաստավորելու անհրաժեշտություն:

СОЦИАЛИСТИЧЕСКИЙ РЕАЛИЗМ

(об истории возникновения и развития)

МИРЗАХАНЯН Р. К.

Резюме

Метод социалистического реализма является одним из мировоззренческих методов государственного подхода к художественному творчеству. История развития определений соцреализма раскрывает концептуальную базу режимного, исключительно централизованного восприятия социальной миссии художника коммунистического строя. История догматичной трактовки этой миссии частично раскрыта на базе деятельности ключевых фигур, идеологических основ и политики административного вмешательства в творческий процесс, которые в разные периоды истории Советского Союза

[15] www.inosmi.ru

находили свое непосредственное отражение в понятийном диктате советского государства. Анализ самих определений разоблачает политику навязанных коммунистических директив в сфере творческой деятельности советских писателей и художников на фоне искаженного восприятия философских основ социалистического государства.

SOCIALIST REALISM
(On the problem of the concept's emergence and evolution)

R. MIRZAKHANYAN

Abstract

The paper considers one of the officially recognized and supported approaches of the State conception of the methods of artistic creativity, more precisely, the method of socialist realism which was politically preferable for the Soviet regime. In the paper, the history of the development of the definitions of socialist realism with the conceptual core of the regime-based, exclusively centralized perception of the mission of the communistic artist and creator is revealed.

The history of the dogmatic interpretation of this mission is partly exposed on the basis of the activities of the key figures, as well as ideological bases and the policy of administrative interference with the creativity process, which in different periods of the history of Soviet Union would find its immediate reflection in the concept-based dictate of the Soviet State. The analysis of the aforementioned definitions uncovers the policy of imposed communist directives in the sphere of creative activities of Soviet writers and artists against the background of distorted perceptions of philosophical bases of the Soviet State.